ՊԵՏԱԿԱՆ ԳՈՒՅՔԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԿՈՄԻՏԵ
ՆԱԽԱԳԱՀ

Հ Ր Ա Մ Ա Ն

№_____-Լ «__» _____2023 թ. ք.Երևան

ՊԵՏԱԿԱՆ ԳՈՒՅՔԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԿՈՄԻՏԵԻ ՆԱԽԱԳԱՀԻ 2023 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 18-Ի N 171-Լ ՀՐԱՄԱՆՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ հոդվածի և Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի 2020 թվականի ապրիլի 27-ի N 30-Լ հրամանով հաստատված հավելված 19-րդ կետի 11-րդ ենթակետի պահանջները՝

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ

Պետական գույքի կառավարման կոմիտեի նախագահի 2023 թվականի ապրիլի 18-ի «Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության պետական գույքի կառավարման կոմիտեի ենթակայության հարյուր տոկոս պետությանը սեփականության իրավունքով պատկանող բաժնեմաս ունեցող փակ բաժնետիրական ընկերությունների գործադիր մարմինների թափուր պաշտոնի համար մրցույթի և այդ պաշտոնում նշանակված անձանց ատեստավորման անցկացման ընթացակարգերը և մրցութային ու ատեստավորման հանձնաժողովների ձևավորման կարգերը հաստատելու մասին» N 171-Լ հրամանի 1-ին կետով հաստատված N 1 հավելվածում կատարել հետևյալ փոփոխությունները.

1) 9-րդ կետի 3-րդ ենթակետն ուժը կորցրած ճանաչել.

2) 12-րդ կետից հանել «, որի ձևը հաստատվում է Կոմիտեի նախագահի հրամանով» բառերը.

3) 75-րդ կետի 2-րդ ենթակետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«2) Բողոքը պետք է ներկայացվի մրցույթի արդյունքները հրապարակելուց հետո մեկ ժամվա ընթացքում: Ընդ որում Բողոքը քննության է առնվում այն Կոմիտե մուտքագրվելուց հետո երեք աշխատանքային օրվա ընթացքում: Մրցույթի նախապատրաստական

աշխատանքներն իրականացնող Բաժինը Բողոքը ստանալուց հետո հարցազրույցի ձայնագրությունների և սույն Կարգով նախատեսված փաստաթղթերի պատճենների հետ անմիջապես ներկայացնում է Կոմիտեի նախագահին.».

4) 75-րդ կետի 3-րդ և 4-րդ ենթակետերն ուժը կորցրած ճանաչել:

08.06.2023

X

ԱՌՆԱԿ ԱՎԵՏԻՍՅԱՆ Signed by: AVETISYAN ARNAK 1701920336